ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն աշխատակարգը սահմանում է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի (ԴՄ) իրավասությունները, նիստերի գումարման, անցկացման, քվեարկության, եզրակացության, հայտարարության կամ փորձագիտական կարծիքի ընդունման կարգը:

1.2. Դիտորդ մարմինն ինքն է հաստատում իր աշխատակարգը, դրանում կատարում փոփոխություններ և լրացումներ:

1.3. ԴՄ աշխատակարգն ու դրանում կատարված փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում ընդունման պահից, ապա վավերացվում են Ինքնակարգավորման նախաձեռնության առաջին իսկ ընդհանուր ժողովում:

1.4. ԴՄ աշխատանքների հետ կապված ծախսերը կատարվում են ԶԼՄ-ների Ինքնակարգավորման նախաձեռնության անդամների, նախաձեռնությանն աջակցող կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց ներդրումների ու տրամադրած միջոցների հաշվին, որոնց վերաբերյալ տեղեկություն է ներկայացվում Ինքնակարգավորման նախաձեռնության ընդհանուր ժողովում:

2. Դիտորդ մարմնի կառուցվածքը և իրավասությունները

2.1. ԴՄ անդամներն ընտրվում են Ինքնակարգավորման նախաձեռնության ընդհանուր ժողովում:

2.2. ԴՄ-ն ունի 14 անդամ, որոնք ներկայացնում են լրատվամիջոցների ղեկավար կազմը, լայն հասարակությունը և լրագրողական մասնագիտական հանրությունը:

2.3 ԴՄ-ն կարող է ունենալ նախագահ, որը՝
ա. իրականացնում է Դիտորդ մարմնի աշխատանքների ընդհանուր ղեկավարումը,
բ. նախագահում է ԴՄ նիստերը,
գ. ԴՄ-ն ներկայացնում է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում,
դ. ԴՄ անունից տարածում է հայտարարություններ և ուղերձներ:

ԴՄ նախագահի բացակայության դեպքում ԴՄ նիստերը նախագահում է ԴՄ տարիքով ավագ անդամը:

2.4. ԴՄ-ն կարող է ունենալ համակարգող, որի հիմնական գործառույթը դիմում-բողոքներն ընդունելը, ԴՄ նիստերը կազմակերպելը, ընդունվելիք փաստաթղթերի նախագծերն ու նիստում քննարկումների և առաջարկների հիման վրա դրանց վերջնական տարբերակները պատրաստելն է:

2.5. ԴՄ նիստերը գումարվում են 14 անդամից առնվազն 7-ի մասնակցությամբ:

2.6. Դիտորդ մարմինը՝

ա. ընդունում և քննում է ԶԼՄ-ների կողմից Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի (հետագա տեքստում՝ Կանոնագիր) խախտման վերաբերյալ բողոքները,

բ. քննության արդյունքներով ընդունում և հրապարակում է եզրակացություն կամ փորձագիտական կարծիք, կամ հանդես է գալիս հայտարարությամբ,

գ. իր նախաձեռնությամբ կարող է Կանոնագիրը ստորագրած ԶԼՄ որևէ հրապարակման քննություն իրականացնել, եթե նկատում է էթիկական խախտում, և եթե հրապարակումը հանրային հնչեղություն է ստացել. նման քննություն սկսելուց առաջ տեղեկացնում է տվյալ լրատվամիջոցին և նրբանկատություն է դրսևորում անձանց մասնավոր կյանքի նկատմամբ,

դ. իր նախաձեռնությամբ կարող է Կանոնագրի հիման վրա իրականացնել ԶԼՄ-ների գործունեության դիտարկում և հրապարակել դրա արդյունքները,

ե. Կանոնագրի դրույթների հիման վրա մշակում է ուղեցույցներ,

զ. հանրային նշանակություն ունեցող և լրատվամիջոցների գործունեությանն առնչվող խնդիրների վերաբերյալ հանդես է գալիս հայտարարություններով,

է. իրականացնում է իր լիազորություններից և Կանոնագրից բխող այլ գործառույթներ:

3. Դիտորդ մարմնում քվեարկության և որոշումներ ընդունելու կարգը

3.1. Դիտորդ մարմինն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերի նախապատրաստումը իրականացնում է ԴՄ համակարգողը, նրա բացակայության դեպքում՝ անդամներից որևէ մեկը:

3.2. Դիտորդ մարմնի անդամի՝ նիստին մասնակցելու անհնարինության դեպքում, նա որոշումների կայացման համար իր քվեարկելու իրավունքը կարող է լիազորել ԴՄ այլ անդամի:

3.3. ԴՄ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե սույն Աշխատակարգով կամ ԴՄ տվյալ նիստի որոշմամբ քվեարկության այլ կարգ չի սահմանվել:

3.4. Բացառիկ դեպքերում ԴՄ-ն կարող է փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու որոշում ընդունել:

3.5. ԴՄ-ում քննարկվող որևէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն կամ շահերի բախում ունեցող ԴՄ անդամը պարտավոր է քննարկումից առաջ այդ մասին տեղեկացնել ԴՄ համակարգողին՝ հրաժարվելով տվյալ նիստին մասնակցելուց:

4. Դիտորդ մարմնում բողոքներն ընդունելու, քննելու, եզրակացություն կամ փորձագիտական կարծիք մշակելու, հաստատելու և հրապարակելու կամ հայտարարությամբ հանդես գալու կարգը

4.1. Անձինք և կազմակերպությունները ԶԼՄ-ների հրապարակումների դեմ ԴՄ-ին բողոք կարող են ներկայացնել տվյալ հրապարակման օրից հետո երեք ամսվա ընթացքում:

4.2. ԴՄ-ում բողոքի քննության և եզրակացության ընդունման առավելագույն ժամկետը երկու ամիսն է:

4.3. Դիմումը ստանալուց հետո ԴՄ համակարգողը կամ անդամներից մեկը դիմողին իրազեկում է քննության ժամկետների ու ընթացակարգերի մասին:

4.4. Անձին կամ կազմակերպությանը վերաբերող և ենթադրաբար նրանց իրավունքները խախտող հրապարակումների դեմ բողոքով ԴՄ-ին կարող են դիմել միայն տվյալ անձը, կազմակերպությունը, նաև նրանց լիազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձինք:

4.5. ԴՄ-ն քննարկման չի ընդունում անձին կամ կազմակերպությանը վերաբերող և ենթադրաբար նրանց իրավունքները խախտող հրապարակումների դեմ երրորդ անձանց բողոքները:

4.6. ԴՄ-ն կարող է ընդունել երրորդ անձանց դիմում-բողոքը, եթե այն ներկայացնում է տվյալ ոլորտում մասնագիտացած ՀԿ-ն, և եթե բողոքը վերաբերում է տվյալ ՀԿ շահառուին առնչվող հրապարակումներին:

4.7. Տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողների գործունեությանը վերաբերող էթիկական խնդիրների առնչությամբ պատշաճ դիմող է ճանաչվում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը («Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի իմաստով)՝ որպես ոլորտը կարգավորող պետական մարմին, որը լիազորված է նաև հետևելու այդ ԶԼՄ-ների մասնագիտական էթիկայի նորմերի պահպանմանը: ՀՌՀ-ից ստացված դիմումները քննվում են գործող ընթացակարգով, ինչի արդյունքում, եթե վեճը վերաբերում է Կանոնագիրը ստորագրած հեռուստաընկերությանը կամ

ռադիոընկերությանը, ԴՄ-ն տրամադրում է եզրակացություն, իսկ մյուս դեպքերում՝ փորձագիտական կարծիք, կամ հանդես է գալիս հայտարարությամբ։

4.8. ԴՄ-ն Ինքնակարգավորման նախաձեռնության անդամների կողմից Կանոնագրի խախտման վերաբերյալ բողոքների քննությունից հետո ընդունում է եզրակացություն կամ հայտարարություն, որի՝ խախտմանը վերաբերող որոշումը, Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրով լրատվամիջոցների ներկայացուցիչների ստանձնած պարտավորության համաձայն, լրատվամիջոցը հրապարակում է առանց մեկնաբանությունների։

4.9. ԴՄ-ն Ինքնակարգավորման նախաձեռնության ոչ անդամների հրապարակումների վերաբերյալ բողոքների քննությունից հետո ընդունում և հրապարակում է փորձագիտական կարծիք կամ հայտարարություն։

4.10. ԴՄ-ն քննության է առնում տեղեկատվության ոլորտում պաշտոնապես գործունեություն իրականացնողների մասնակցությամբ տեղեկատվական վեճերը և ըստ անհրաժեշտության հանդես է գալիս հայտարարությամբ կամ պատրաստում և հրապարակում է փորձագիտական կարծիք։

4.11. Ինքնակարգավորման նախաձեռնության անդամ ԶԼՄ-ների դեմ բողոքի քննությունը սկսելուց առաջ ԴՄ-ն բողոքը ներկայացնող անձին առաջարկում է անմիջապես դիմել հրապարակումը իրականացրած լրատվամիջոցին, կամ ինքն է իր նախաձեռնությամբ դիմում տվյալ ԶԼՄ-ին՝ առաջարկելով վեճը լուծել պատասխան կամ հերքում հրապարակելով կամ ենթադրյալ խախտումը այլ կերպ վերացնելով։

4.12. Սույն հոդվածի 4.11 կետով նախատեսված դեպքերում տվյալ ԶԼՄ-ին դիմելուց բողոքարկող անձի հրաժարվելու կամ ենթադրաբար խախտում թույլ տված ԶԼՄ-ից պատասխան չստանալու դեպքում ԴՄ-ն իրականացնում է քննություն և դրա հիման վրա ընդունում եզրակացություն։

4.13. Նախաձեռնության անդամ չհանդիսացող ԶԼՄ-ների հրապարակումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել տվյալ լրատվամիջոցի համաձայնության դեպքում։ Այսուհանդերձ, տվյալ ԶԼՄ համաձայնության բացակայության դեպքում ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում հրապարակման վերաբերյալ ներկայացնել փորձագիտական կարծիք՝ տարածելով այն իրեն հասանելի միջոցներով։

4.14. Դիտորդ մարմնի եզրակացություններն ու կարծիքներն ընդունվում են Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի, ՀՀ իրավական ակտերի, նաև միջազգային իրավական ակտերի և դատական նախադեպերի հիման վրա։ Եթե բողոքի քննությանը մասնակցած որևէ ԴՄ անդամ համաձայն չէ ընդունված փորձագիտական կարծիքին կամ եզրակացությանը, ապա կարող է որոշման վերջում ավելացնել իր հատուկ կարծիքը։

4.15. ԴՄ եզրակացություններն ու փորձագիտական կարծիքներն ուղարկվում են գործով ներգրավված կողմերին, նաև կարող են հրապարակվել լրատվամիջոցներում և կայքերում։

4.16. Ինքնակարգավորման նախաձեռնության անդամ ԶԼՄ կողմից ԴՄ-ի ընդունած եզրակացությունը չհրապարակելու դեպքում տվյալ ԶԼՄ-ն նախազգուշացվում է այդ մասին:

4.17. Սույն հոդվածի 4.16 կետով նախատեսված նախազգուշացումից հետո էլ եզրակացությունը չհրապարակելու դեպքում տվյալ լրատվամիջոցի անդամությունը ԶԼՄների ինքնակարգավորման նախաձեռնությանը կասեցվում է: Անդամության կասեցման փաստը արձանագրվում է Դիտորդ մարմնի առաջին իսկ նիստին: Եթե մինչև Ինքնակարգավորման նախաձեռնության առաջիկա Ընդհանուր ժողովը տվյալ ԶԼՄ-ն իրեն վերաբերող եզրակացությունը չի հրապարակում, ապա Ընդհանուր ժողովը դադարեցնում է նրա անդամությունը Ինքնակարգավորման նախաձեռնությանը: ԴՄ նիստի և Ընդհանուր ժողովի միջև ընկած ժամանակահատվածում տվյալ ԶԼՄ-ն հնարավորություն ունի վերականգնելու իր անդամությունը Ինքնակարգավորման նախաձեռնությունում՝ կատարելով ԴՄ եզրակացության հրապարակման իր պարտականությունը և տեղեկացնելով դրա մասին հանրությանը՝ ԴՄ հետ համաձայնեցված տեքստով:

4.18. Այն դեպքում, երբ բողոքը ԴՄ-ին ներկայացնելուն զուգահեռ բողոք ներկայացնող անձը նույն հիմքով դիմում է դատարան, ԴՄ-ն կասեցնում է բողոքի քննությունը մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: ԴՄ-ն վերսկսում է բողոքի քննությունը միայն այն դեպքերում, երբ իր եզրակացությունը կամ փորձագիտական կարծիքը դատաքննության համար կարևոր է, կամ երբ դատարանի վճիռը չի բավարարում կամ մասամբ է բավարարում անձին, և նա դիմում է ԴՄ-ին՝ քննությունը վերսկսելու խնդրանքով:

4.19. Այլ երկրների ԶԼՄ-ների կողմից լրագրողական էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ ԴՄ-ին հասցեագրված բողոքի առկայության դեպքում ԴՄ-ն դիմում է տվյալ երկրի ինքնակարգավորան մարմնին կամ Ինքնակարգավորման կազմակերպությունների ցանցի Քարոզչության դեմ պայքարի խորհրդատվական հանձնաժողովին:

Սույն աշխատակարգն ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2018թ. մարտի 16-ի նիստում:

Աշխատակարգը՝ փոփոխություններով և լրացումներով, վավերացվել է Ինքնակարգավորման նախաձեռնության անդամների ընդհանուր ժողովում՝ 2023թ. հունիսի 25-ին: